ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆԻ՝ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐ (Ք. ՆՅՈՒ ՅՈՐՔ) ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը.**
   Դավիթ Սահակյան:

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ:

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ամերիկայի Միացյալ Նահանգներ (ք. Նյու Յորք), 2023թ. հունիսի 19-ից 23-ը:

4. **Հրավիրող կողմը.**
   «Orion Worldwide Innovations» ընկերություն:

5. **Գործուղման նպատակը.**
   Մասնակցություն «Orion Summit 2023» ներդրումային գագաթնաժողովին:

6. **Քննարկված թեմաները.**

2023թ. հունիսի 19-ից 23-ը Նյու Յորքում տեղի է ունեցել «Orion Summit 2023» ներդրումային գագաթնաժողովը: Միջոցառմանը ներկա են եղել ՀՀ էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, աշխարհի 7 երկրների տարբեր ներկայացուցիչներ՝ բիզնեսի, ֆինանսական, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներից, ստարտափների հիմնադիրներ ու ղեկավարներ, դեսպանատների, միջազգային կազմակերպությունների, ֆինանսական ընկերությունների ներկայացուցիչներ, առողջապահության, գյուղատնտեսության և այլ ոլորտների գործարարներ, որոնք քննարկել են Հայաստանը համաշխարհային ներդրումային քարտեզի վրա տեղորոշելու առավել արդյունավետ ուղիները:

«Orion»-ը հիմնադրվել է 2017թ.՝ ԱՄՆ-ում: Ընկերությունը գրասենյակներ ունի Նյու Յորքում, որը ֆինանսների կապիտալի մայրաքաղաքն է, և Երևանում: Այն համագործակցում է աշխարհի

տարբեր երկրներում գործող ընկերությունների և ներդրողների ցանցերի հետ: «Orion»-ը ներդրումների ենթակա ընկերությունների համար ստեղծում է ԱՄՆ մուտք գործելու հնարավորություններ, բարելավում այդ ընկերությունների՝ հաճախորդներ ձեռք բերելու ռազմավարությունները, օգնում մնալ մրցունակ և պաշտպանում իրենց նորարարությունները:

Գագաթնաժողովի նպատակն էր ստեղծել նոր ներդրումային հորիզոններ, մեծացնել ոչ միայն ներդրումների քանակը և ծավալը, այլ նաև ներդրումների գործունեությունը Հայաստանի և արտասահմանի միջև: Ստեղծել գործիքակազմ, որը թույլ կտա նոր ծավալով ներդրումներ անել Հայաստանում, նաև Հայաստանի՝ որպես նորարար, որպես զարգացող և մեծ ապագա ունեցող երկրի կապիտալը հաստատել արտասահմանում:

Միջոցառման շրջանակներում կայացել են քննարկումներ «Արհեստական բանականության և «ChatGPT»-ի ապագան և ազդեցությունը ստարտափ ընկերությունների վրա», «Կրիպտո և բլոկչեյն շուկաներ», «Տնտեսության աճի վրա թվային փոխակերպման և նորարարության ազդեցության միտումները», «Նորարարությունն ու ֆինանսական միտումները և դրանց ազդեցությունը ապագայի վրա», «Տեխնոլոգիաների և ֆինանսների ոլորտներում ներդրումային և նորարարության առաջնահերթություններ», «Ստարտափ էկոհամակարգի և երկրի տնտեսական աճի զարագացմանը խթանող այլընտրանքային ներդրումներին, ընտանեկան գրասենյակների հաջողության պատմություններին և հայկական ընտանեկան գրասենյակների պրոֆիլի փոփոխմանը» թեմաներով:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Միջոցառման շրջանակներում Դավիթ Սահակյանը այցելել է «Jacobs Technion-Cornell Institute at Cornell Tech» համալսարան, որը հիմնադրվել է «Technion-Israel» տեխնոլոգիական ինստիտուտի և ամերիկյան «Cornell University»-ի կողմից, որը 20-րդն է համալսարանների համաշխարհային վարկանիշում: Շրջայցը գլխավորել է «Runway and Spinouts» ծրագրի տնօրեն Ֆերնանդո Գոմես-Բաքուերոն, որտեղ քննարկումներ են տեղի ունեցել նորարարությունների և ներդրումների վերաբերյալ:

Ներկայացվել են «Jacobs Technion-Cornell Institute at Cornell Tech»-ը երկու ծրագրերը՝ մագիստրոսական, որտեղ պատրաստում են ստարտափներ, անհատ ձեռներեցներ (enterprineors), և ասպիրանտուրական (PHD): Քննարկվել են ՀՀ-ում գիտական զարգացման հնարավորությունները, որոնք հնարավորություններ են ստեղծում գիտական առևտրայնացման

գործունեության ավելի գործնական կիրառելիության ապահովման համար: Դիտարկվել է ստարտափ էկոհամակարգի զարգացման հարցում համագործակցության, գիտական առևտրայնացման փորձի ուսումնասիրության, Հայաստանում ներդնելու և գիտնականների փորձի փոխանակման հնարավորությունները: Հանդիպմանը քննարկվել են Հայաստանում տվյալ ոլորտների զարգացման ու մրցունակության բարձրացման նպատակով փոխգործակցության հնարավորությունները: Ծանոթացել է համալսարանի առաքելությանը, այն է՝ Նյու Յորքը վերածել ինովացիոն կենտրոնի:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել կազմակերպել համալսարանի ներկայացուցչի այցը Հայաստան, որի շրջանակում տեղի են ունենալու դասախոսություններ Հայաստանի երիտասարդ գիտնականների և ուսանողների համար: Դասախոսությունները հնարավորություն կընձեռեն Հայաստանի երիտասարդ գիտնականներին և ուսանողներին դիտարկել կատարվող հետազոտությունների առևտրայնացման, գործնական կիրառման հնարավորությունը: Միջոցառման շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը մասնակցել է «Ստարտափ էկոհամակարգի և երկրի տնտեսական աճի արագացմանը խթանող այլընտրանքային ներդրումներին, ընտանեկան գրասենյակների հաջողության պատմություններին և հայկական ընտանեկան գրասենյակների պրոֆիլի փոփոխմանը» խորագրերով պանելային քննարկմանը, որի ընթացքում ներկայացրել է նախարարության գործունեության հիմնական ուղղությունները, Հայաստանում բարձր տեխնոլոգիաների կարողությունների զարգացման նպատակով իրականացվող ծրագրերը, պետության անմիջական մասնակցությունը ոլորտային զարգացման գործընթացին: Նշվել է նաև, որ նախարարությունը պատրաստ է համագործակցելու միջազգային գործընկերների հետ: Այցելել է նաև «Navy Yard» տեխնոպարկ, ծանոթացել է վերջինիս գործունեությանը:

Միջոցառման շրջանակներում Դավիթ Սահակյանը հանդիպում է ունեցել «Ամերիկահայ ճարտարագետների և գիտնականների» ընկերության նախագահ Յովհաննէս Մարտիրոսեանի հետ: Ընկերությունը հիմնադրվել է 1983թ., որի գործունեությունը հիմնված է աշխարհասփյուռ հայերի մասնագիտական, տեխնիկական և գիտական կարիքների զարգացման վրա: Ընկերության նպատակն է ապահովել հայ գիտնականների և ճարտարագետների միջև տեխնիկական և սոցիալական փոխգործակցությունը Միացյալ Նահանգներում և արտերկրում, ինչպես նաև խթանել գիտության և ճարտարագիտության գիտելիքների տարածումը:

Գործունեությունը ներառում է տեղական, ազգային և միջազգային մակարդակներում գործընկերների միջև փոխգործակցություն, հայերի տեխնիկական ձեռքբերումների ճանաչում, գիտության և ճարտարագիտության ոլորտում համագործակցություն: Այցի շրջանակներում քննարկվել է գիտելիքահեն ստարտափ ընկերությունների հետ համագործակցության հնարավորությունը, որի նպատակն է կիրառական գիտական դպրոցների զարգացման ուղղությամբ համագործակցության ապահովվումը:

«Harvard Club»-ում, տեղի է ունեցել պանելային քննարկում «Թվային Ջուղա ցանցի» (Digital Julfa Network) թեմայի շրջանակներում: Պանելային քննարկմանը մասնակցել են ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, Ներդրումների գլխավոր տնօրեն և «Covenant Venture Capital»-ի հիմնադիր գործընկեր Կառլ Դուգլասը, Bank of America-ի Գլոբալ կորպորատիվ ռազմավարության, ռազմավարական ներդրումների տնօրեն Ռենե Նալբանդյանը, «BDO US» ընկերության մասնավոր հաճախորդներին ծառայություններ մատուցելու գծով գործընկեր Լիդյա Վերսելին:

Փարքեր Շիդին բացման խոսքի ժամանակ նշել է, որ Նյու Յորքում 9 բիզնեսներից 1-ը ստեղծվել է վերջին 18 ամիսների ընթացքում: Բացի այդ, անցած ամիս Նյու Յորքը գերազանցել է Սան Ֆրանցիսկոյին՝ ամսական ստեղծված ստարտափների քանակով: Նյու Յորքն այսօր ունի բիզնեսի համար հիանալի էկոհամակարգ: Նա բարձր է գնահատել հայ գործարար համայնքի հետ համագործակցությունը և հավելել, որ ապագա ներդրումների համար կա մեծ ներուժ: Դավիթ Սահակյանը ներկայացրել է ՀՀ ԲՏԱ նախարարության գործունեությունը: Հայաստանն իր աշխարհագրական եզակի դիրքը պետք օգտագործի հօգուտ իր շահերի:

Հանդիպման նպատակը ամբողջ հայության տեխնոլոգիական ներուժի համախմբումն ու ՀՀ-ում տեխնոլոգիական ոլորտի զարգացումն էր:

Հանդիպումներով և քննարկումներով հագեցած չորս օրերի ընթացքում գագաթնաժողովի ավելի քան 100 մասնակիցներ քննարկեցին մի շարք հարցեր, թե ինչպես Հայաստանը գրավիչ դարձնել համաշխարհային ներդրումների համար, ինչպես նպաստել երկրի և դրա տնտեսության զարգացմանը և ինչ դեր կարող են խաղալ այս ամենում ժամանակակից տեխնոլոգիաները: Միջոցառման շրջանակներում Դավիթ Սահակյանը հանդիպում է ունեցել «Covenant VC»-ի նորանշանակ ղեկավար դոկտոր Արմեն Խերլոփեանի հետ, քննարկել է «Covenant VC»-ի

Հայաստանում գործունեություն ծավալելու և ֆինանսական ռեսուրսների հավաքագրման հնարավորությունները: Հանդիպումներ է ունեցել տարբեր ոլորտային ներկայացուցիչների հետ, որոնց հետ ձեռք է բերվել պայմանավորվածություն փորձի փոխանակման համագործակցության վերաբերյալ:

Նյու Յորք կատարված այցի շրջանակներում հանդիպում է տեղի ունեցել «WEVE Acceleration» ընկերության տնօրեն Ֆրենսիս Սիմովիցի, ծրագրի ղեկավար Նոահ Հյամի, ծրագրի համակարգող Լեոնոր Մորգենստերի, մի շարք աքսելատորի մի շարք մենթորների և խոսնակների հետ: Քննարկվել է հնարավոր համագործակցության հնարավորությունը՝ իրենց ներգրավվածությունը մեր էկոհամակարգի զարգացման գործում: Մասնավորապես, որոշ ծրագրերի իրականացման հարցով համագործակցությունը: «WEVE Acceleration» ծրագիրը գործում է ավելի քան քսան տարի և ուղղված է միջազգային ստարտափների՝ ԱՄՆ մուտքի աջակցության տրամադրմանը: 2017 թվականից (Նյու Յորքում հիմնվել է գրասենյակը) աջակցություն է տրամադրվել 25 պետություններից ավելի քան 120 ստարտափների:

Այս այցի շրջանակներում ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Դավիթ Սահակյանը հանդիպում է ունեցել նաև «Techstars accelerator» ընկերության եկամուտների գծով տնօրեն Ռայան Սփիլանի հետ: Քննարկվել է հնարավոր համագործակցությունը և իրենց անմիջական մասնակցությունը Հայաաստանի Հանրապետության տեխնոլոգիական ձեռներեցության էկոհամակարգի զարգացմանը, ստարտափների զարգացմանը և աջակցմանը:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու քննարկումները Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ում գործող ոլորտային ընկերությունների միջև տեղեկատվական տեխնոլոգիաների, նորարարության, գիտության, կրթության նոր ծրագրերի և այլ ոլորտներում համագործակցության ընդլայնմանն ուղղված ծրագրեր և նախագծեր իրականացնելու վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

ԴԱՎԻԹ ՍԱՀԱԿՅԱՆ
28.06.2023թ.